Համբարձումյան Ա. - Արամ Իսաբեկյան: «Եթե մարդ ուզում է նկարիչ լինել, ուրեմն ամբողջ օրը պետք է ճեպանկար անի», - թերթ, «Առավոտ», Ե., 11.03.2013

Ալբերտ և Թովէ Բոյաջյան ցուցասրահում այսօր տեղի ունեցավ «Արվեստանոց» խորագրով ճեպանկարի ցուցահանդես: Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի 3-րդ և 4-րդ կուրսի գրաֆիկայի բաժնի 13 ուսանող ներկայացրեցին իրենց լավագույն աշխատանքները: Գծանկարչության դասախոս Աննա Ավետիսյանն ասաց. «Ճեպանկարը թեթև և պարզ միջոցներով է ստեղծվում: Մենք փորձեցինք դա բոպեներից մինչև անգամ վայրկյանների ընթացքում: Եվ ցուցասրահում փորձեցինք ստեղծել այդ անմիջականությունը, որից կարելի է արվեստանոցային պարզ միջավայր ստանալ»: Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի ռեկտոր Արամ Իսաբեկյանը հիշելով իր հոր խոսքերը՝ ավելացրեց. «Եթե մարդ ուզում է նկարիչ լինել, ուրեմն ամբողջ օրը պետք է ճեպանկար անի: Իսկապես դա այդպես է, քանի որ շարժման մեջ ամեն ինչ անմիջական է՝ չես խորանում ինչ որ բանի մեջ, եթե դա պետք չէ: Այդ շարժման միջոցով մարդ ավելի շուտ է ընկալում մարդու, կենդանու առանձնահատկությունները»: Կերպարվեստի ֆակուլտետի դեկան Էդվարդ Վարդանյանն էլ նշեց, որ ցուցասրահում ճեպանկարի ցուցադրություն դեռ տեղի չէր ունեցել: Եվ դա պետք է ոգևորող լինի և ոչ միայն ճեպանկարի այլև գծանկարի, բնորդի, դիմանկարի ցուցահանդեսներ կազմակերպելու համար: Հեռանկարի, կոմպոզիցիայի դասախոս Արմեն Կանայանն էլ կիսվեց իր տպավորություններով. «Ուսանողները չեն աշխատել հատուկ այս ցուցահանդեսի համար, այլ աշխատել են մշտապես: Եվ այդ մշտական, ամենօրյա քրտնաջան աշխատանքի արդյունքը եղավ այս ցուցահանդեսը: Այս աշխատանքները միայն ցուցահանդեսի համար չէ, որ պատրաստվել են, սրանք ընթացիկ աշխատանքներ են և պտուղը տվել է այդ աշխատանքը»: «Արվեստանոց» խորագրով ճեպանկարի ցուցահանդեսի բացման արարողությունը տեղի ունեցավ մեկ բոպե լռությամբ: Ներկաները հարգեցին նկարիչ Հակոբ Հակոբյանի հիշատակը, ով միշտ ներկա էր գտնվում ցուցասրահի ցուցահանդեսներին:

Արմինե ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

https://www.aravot.am/2013/03/11/213331/